# ԱՐՄԱՎԻՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԻ ԱՌԵՎՏՐԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ (1839—1914 թթ.)

Լ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

1839 թ. Հյուսիսային Կովկասում, Կուբան գետի ձախ ափին, հիմնվում է ռուսահայ գաղթավայրերից մեկը՝ Արմավիրը։

Արևմտյան Կովկասի նվաճման ժամանակ ռուսական կառավարությունը, նկատի ունենալով արևմտյան ադիգեյցիների շրջանում ապրող հայ հատվածի (չերքեզահայերի) մատուցած ծառայություններն ու նրանց անհրաժեշտությունը նոր գրաված և գրեթե անմարդաբնակ երկրամասի բնակեցման գործում, ձեռնարկում է չերքեզահայերի վերաբնակեցումը Կուբանի ռուսական սահմաններում։ Երկրագործությամբ զբաղվելու նպատակով նորաբնակներին զգալի հողատարածություն է հատկացվում, միաժամանակ միջոցներ են ձեռնարկվում տնտեսության մյուս ճյուղերի և մասնավորապես առևտրի զարգացման համար։

Հյուսիսային Կովկասի հայ գաղթավայրերի շարքում Արմավիրը աչքի է ընկել իր տնտեսական և կուլտուրական ուրույն կյանքով։ Այս գաղթօջախը ներքին կառավարման տեսակետից անկախ էր և հանձին գյուղական ժողովի ուներ իր կառավարչությունը։ Ինքնուրույն սկզբունքով է գործել Արմավիրի ժողովրդական դատարանը՝ խարսխված ազգային ավանդական սովորույթների վրա։

Չնայած XIX դարի վերջերին Արմավիրի ժողովրդական դատարանի իրավասության և գործունեության շրջանակները նեղացվում են, սակայն ազգային իրավական նորմերով առաջնորդվելու նրա տարբերիչ գծերը առանց էական փոփոխությունների պահպանվում են հետագայում ևս։ Արմավիրը մինչև XIX դարի 70-ական թթ. փաստորեն հայաբնակ ավան էր և օգտվում էր իրավա-վարչական ու տնտեսական որոշակի արտոնություններից։ Սակայն դարավերջին արդեն Արմավիրում գերակշռող ռուս բնակչությունն էր։ Փորձիկ համալրումների ճանապարհով արմավիրահայ համայնքը կարողացավ պահպանել իր գոյությունը և իր համեստ լման ներդրեց արդեն ռուսական քաղաք դարձած Արմավիրի առևտրա-տնտեսական կյանքում։ Արմավիրը միանգամից չկազմավորվեց որպես քաղաք, այլ հիմնադրման օրվանից սկսած, տարիների ընթացքում աստիճանաբար աճեց, կառուցապատվեց և XX դարի սկզբներին արդեն դարձավ Հյուսիսային Կովկասի բարեկարգ քաղաքներից մեկը։ Հայ նշանավոր գրող Ալ. Շիրվանզադեն XX դարի սկզբին Հյուսիսային Կովկասում կատարած ճանապարհորդության ժամանակ այցելում է նաև Արմավիր, որի մասին գրում է. «Այդ ահագին գյուղը իր ընդարձակ փողոցներով, գեղեցիկ տներով և հարուստ մագազիններով կարող է մրցել Կովկասի ամեն մի նահանգական քաղաքի հետ»[1]։

---

[1] Ա լ. Շ ի ր վ ա ն զ ա դ ե. Նամակներ Հյուսիսից. Երկերի ժողովածու, հատ. 9, Երևան, 1961, էջ 89։

Մայր հայրենիքի և մյուս ռուսահայ կենտրոնների հետ Արմավիրի ունեցած կապերը վկայում են, որ այս հայ գաղթավայրը սոսկ ինքնամփոփ կյանքով չի ապրել, հայրենիքի և մյուս հայ գաղթօջախների հետ առնչվել է հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի տարբեր ոլորտներում։ Առավել հատկանշական են եղել կուլտուր-լուսավորական բնույթի առնչությունները։ Արմավիրահայ ուսանողության միջոցով հայկական գաղթօջախը կապեր է հաստատել Մոսկվայի Լազարյան ճեմարանի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և այլ ուսումնական հաստատությունների հետ։ Արմավիրի հայ համայնքը հիմնեց հայ դպրոց, հայ թատրոն, զարգացրեց և լայնորեն տարածեց հայկական երգն ու երաժշտությունը։

Արմավիրը հիմնվեց այն ժամանակ, երբ ավարտին էր մոտենում Հյուսիսային Կովկասի վերջնական նվաճումը և ցարական Ռուսաստանի կողմից ամբողջ սրությամբ դրվում էր երկրամասի վերաբնակեցման և տնտեսական կյանքի աշխուժացման հարցը։ Նոր երկրամասը բնակեցնելու, այն յուրացնելու և տնտեսական կյանքը աշխուժացնելու գործում կարևոր նշանակություն էր տրվում առաջին հերթին առևտրին, ուստի և ռուսական կառավարությունը ամեն կերպ ջանում էր խթանել նրա զարգացմանը։ Մեծ ուշադրություն էր դարձվում հատկապես լեռնցիների հետ կատարվող բնամթերային-փոխանակային առևտրին, նրանց ռուսական առևտրի ոլորտը ընդգրկելու խնդրին։ Տեղացի լեռնաբնակ և ռուս ազգաբնակչության միջև առևտրի միջնորդի դերը հիմնականում կատարել են չերքեզահայերը։

Արդեն XV—XVI դդ. Չերքեզիա գաղթած ղրիմահայերը զբաղվել են ինչպես երկրագործությամբ և անասնապահությամբ, այնպես էլ առևտրով։ Առևտրի մեջ հմտացած հայերը կապեր են հաստատել ոչ միայն իրենց հայրենակիցների, այլև Հյուսիսային Կովկասի տարբեր շրջանների բնակիչների, իսկ ավելի ուշ՝ նորնախիջևանցիների հետ։ Չերքեզահայերը արտահանել են, հիմնականում, հում նյութ և ներմուծել մշակված ապրանքներ։ Մեծ տեղ է հատկացվել աղի առևտրին, որը չերքեզները ներմուծել են Ղրիմից։

Այսուհանդերձ անդրկուբանյան հայերի առևտուրը մեծ ծավալ ընդունեց միայն Ռուսաստանի կողմից Հյուսիսային Կովկասի գրավման շրջանում։ XIX դարի I կեսին վերաբերող պաշտոնական վավերագրերում բազմիցս շեշտվում է այն փաստը, որ չերքեզները առանց հայերի մասնակցության առևտրական ոչ մի գործարքի մեջ չեն մտնում ռուսների հետ, իսկ հայերը, որոնք վաղուց ի վեր սովորեցրել են լեռնցիներին՝ երկրագործական ամբողջ արտադրանքը սպառել իրենց միջնորդությամբ, շարունակում են իրենց ձեռքում պահել տնտեսության այդ ճյուղը[2]։

Պահպանված արխիվային վավերագրերն ու փաստական այլ նյութերը հաստատում են, որ ռուսահայերը եղել են ոչ միայն առևտրականներ, այլև երկրագործներ ու անասնապահներ, հմուտ արհեստավորներ ու արդյունաբերության նախաձեռնողներ։ Սա մեկ անգամ ևս հաստատվում է Արմավիրի օրինակով, որտեղ գաղութի բնակչությունը ընդգրկված է եղել տնտեսական կյանքի բոլոր բնագավառներում։ Այլ հարց է, որ Արմավիրի հիմնադրման առաջին իսկ օրից, տնտեսական մի շարք ազդակների շնորհիվ, առևտուրը առանցքային տեղ է գրավել գաղութի տնտեսական կյանքում, և հայերը,

---

2 «Акты Кавказской Археографической комиссии» (АКАК), т. VI, ч. II, էջ 450—451։

ըմբռնելով առևտրի զարգացման լայն հնարավորությունները, զբաղվել են առևտրական գործունեությամբ։

Հայ հատվածի հաստատումը նոր նվաճված երկրամասում մեծապես կնպաստեր մարզում առևտրի և արդյունագործության զարգացմանը։ Պարզ է, որ ռուսական սահմանները տեղափոխված անդրկուբանյան հայերը չէին դադարեցնի իրենց շահավետ առևտուրը լեռնցիների հետ, որը և՛ քաղաքական, և՛ տնտեսական առումով շահավետ էր ռուսական տեղական իշխանությունների համար։

Եվ, վերջապես, նկատի էր առնվում այն հանգամանքը, որ Արմավիրի հայ համայնքին որոշակի տնտեսական արտոնություններ շնորհելը վարակիչ օրինակ կծառայեր դեռևս լեռներում բնակվող հարուստ հայերի և հույների համար, որոնք Արմավիր կտեղափոխվեին և նրա հետ կկապեին իրենց ողջ գործունեությունը։

Արմավիրի տեղի ընտրության հարցը առևտրա-տնտեսական կյանքի զարգացման հեռանկարային տեսակետից ճիշտ էր կատարված։ Մերձլաբինյան շրջանը, որի կենտրոնում տեղավորված էր Արմավիրը, բնակեցված էր կազակներով և միանգամայն ապահով էր թշնամական հարձակումներից։ Շուտով Կուբան գետով նավարկություն է սկսվում, իսկ Թեմրյուկում ստեղծվում է առևտրական նավահանգիստ, որը նպաստում է Արմավիրում առևտրի հետագա զարգացմանը։

Սկզբնական շրջանում արմավիրահայերի առևտուրը ունեցել է պարզ փոխանակման բնույթ և հիմնականում կատարվել է չերքեզների հետ։ Պահպանված արխիվային փաստաթղթերից մեկում նշվում է, որ Արմավիրի բնակիչները, տիրապետելով չերքեզերենին և ծանոթ լինելով լեռնցիների բարքերին ու սովորություններին, շարունակում էին առևտուր անել չերքեզական ցեղերի հետ[3]։ Բնամթերային այդ առևտուրը հիմնականում կատարվում էր Պրոչնի Օկոպի, Բատալպաշինսկի և Ուստ-Լաբինսկի փոխանակման շուկաներում։ Լեռնցիները այստեղ էին բերում պատրաստի հագուստներ, գործած ոտնամաններ, գոտիներ, ծոպ (չերք.՝ փափախ), կաճյակ (կաշվե կոշկատակերով), տրեխներ, արծաթով և ոսկով ասեղնագործած սեկե (այծի կաշի) իրեր, տարբեր տեսակի փայտանյութ (շինանյութ), որոնք փոխանակվում էին աղով, կրպակային ապրանքներով, հացահատիկով, մրգերով և այլն[4]։ Անասուններ հայ առևտրականները գնում էին տոնավաճառներում, կազակային ստանիցաներում ու չերքեզներից «կարմիր ապրանքի» (չթեղենի) և ռուսական ֆաբրիկային արտադրանքի հետ փոխանակելու ճանապարհով[5]։

Առաջին խանութները (ավելի շուտ՝ կիսաարհեստավորական և կիսառևտրական կրպակները) Արմավիրում բացվել են 1841 թ., երբ կառուցվել է առաջին խանութաշարքը։ Խանութներում առևտուր են սկսել մի քանի մանր վաճառականներ, որոնք վաճառել են «կարմիր ապրանք» և «ասիական ապ-

---

[3] Государственный архив Краснодарского края (ГАКК), ф. 774, оп. 1, д. 216, л. 206 об.—207.

[4] «Военный сборник», 1861, № 3, т. XVIII, էջ 57։

[5] Ф. А. Щербина, История Армавира и черкесо-гаев, Екатеринодар, 1916, էջ 157։

բանք», որոնցից առաջինը բերել են Ստավրոպոլից, իսկ երկրորդը՝ Թիֆլիսից[6]։ Առևտրի առարկա էր դառնում ոչ միայն անասնապահական և մասամբ տեղական արհեստագործական արտադրանքը, այլ նաև առևտրի միջոցով ձեռք բերված ապրանքը։

Արմավիրահայ առևտրականները չեն սահմանափակվել երկրամասի շրջանակներում կատարվող առևտրով։ XIX դարի կեսերին Արմավիր այցելած ցարական մի պաշտոնյայի զեկուցագրի համաձայն կապիտալ ունեցող և ապրանքներ գնելու նպատակով Ռուսաստանի տոնավաճառները մեկնող արմավիրցի առևտրականների թիվը հասնում էր 15-ի։ Հիշատակվում են նաև 30 առևտրականներ, որոնք ապրանքներ էին գնում տեղում կամ էլ Ստավրոպոլի վաճառականներից[7]։

XIX դարի առաջին կեսին երկրամասի ներքին առևտուրը, հիմնականում, կենտրոնացված էր տոնավաճառներում։ 1842 թ. օգոստոսի 15-ին Կովկասյան մարզի գլխավոր կառավարչին և Կովկասյան գծի ու Չերնոմորիայի զորքերի հրամանատարին ուղղված կայսերական հրամանով նախատեսվում էր. «Մարզում Կուբան և Լաբա գետերի տարածքում, առևտրի զարգացման նպատակով «Հայկական աուլում» հիմնել ամենամյա տոնավաճառներ»[3]։ Արմավիրում թույլատրվում էր տոնավաճառներ բացել տարին 2 անգամ՝ գարնանը (մայիսի 1-ին) և աշնանը (սեպտեմբերի վերջին)։ Առևտուրը կատարվում էր ինչպես Արմավիրում և Կուբանի, Լաբայի, Ուրուպի երկայնքով ձգվող կազակային ստանիցաներում, այնպես էլ հարևան նողայցիների և այլ չերքեզական աուլներում։ Առևտրի հիմնական առարկան ռուսական ֆաբրիկաների մանուֆակտուրային արտադրանքն էր։ Վաճառվում էին նաև հում կաշի, բուրդ, կտաքիսի, աղվեսի, նապաստակի մորթիներ, յուղ, մեղրամոմ, անտառանյութ և այլն[9]։

Այսպիսով, հիմնադրման առաջին իսկ օրից Արմավիրը ընդգրկվում է առևտրի ոլորտը։ Կուբանի, Լաբայի և Ուրուպի շրջաններում բնակչության թվի ավելացման, իր աշխարհագրական դիրքի և հայ առևտրականների նկատմամբ ռուսական կառավարության հովանավորող քաղաքականության շնորհիվ Արմավիրը շուտով իր ձեռքում է կենտրոնացնում Կուբանի ձախափնյա շրջանի առևտուրը։

Ուշագրավ է, որ Արմավիրի հայ առևտրականները, ինչպես նշվում է 1859 թ. պաշտոնական մի վավերագրում, շարունակում էին ազատված մնալ ամեն տեսակի վճարումներից, մինչդեռ տեղի ռուս առևտրականները տարեկան վճարում էին 15 արծաթ ռուբլի հարկ[10]։

XIX դարի կեսերին Արմավիրը արդեն ներքին առևտրի նշանավոր կենտրոններից էր մարզում։ Զբավարարվելով տոնավաճառներով, արմավիրահայերը մշտական մանր առևտուր էին անում տեղում, վաճառքի հանելով անասնապահական, երկրագործական, արհեստավորական և մանուֆակտուրային ար-

---

6 Ս. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Երվ. Շահագիզի ֆոնդ, Չերքեզիա կամ Չերքեզիստան և Չերքեզահայք. էջ 160։

7 ГАКК, ф. 774, оп. 1, д. 216, л. 44.

8 Центральный Государственный исторический архив СССР (ЦГИА СССР), ф. 1268, оп. 1, д. 623, л. 11.

9 ГАКК, ф. 774, оп. 1, д. 216, л. 44 об.—45.

10 Նույն տեղում, թ. 45։

տաղրանք։ Ներքին առևտուրը կատարվում էր, հիմնականում, կրպակներում ու խանութներում։ Արմավիրահայերի պաշտոնական գրություններից մեկում նշվում է. «...զշինեալ իբր 50 կրպակս մեր զօր ծախեալ եմք զտասն ամեայ վաստակս ու զքրտունս աշխատութեան մեր»[11]։ Թե ներքին առևտուրը ինչ ծավալ է ընդունել Արմավիրում հետագա տարիներին, պարզ երևում է հետևյալ տվյալներից. 1896 թ. Արմավիրում կար 235 կրպակ, 1902 թ. կրպակների թիվը ավելանում է 204-ով, հասնելով 439-ի[12]։

Ավելորդ չէ նշել, որ ներքին առևտրի ոլորտն էր ընդգրկվում ոչ միայն տեղական, այլև վերավաճառման նպատակով տարբեր վայրերից գնված մանուֆակտուրային արտադրանքը։ Արմավիրում մանուֆակտուրային առևտուրը զարգացած լինելու մասին ժամանակի հայ մամուլը գրում էր. «Արմավիրի բնիկ առևտրականների մասնագիտությունը մանուֆակտուրի ապրանքի մեջն է ու այս առևտրի ճյուղը այնքան լայն ասպարեզ է բացել, որ արմավիրցի Թորոսյանները, Գասպարյանները, Դավթյանները և Սեֆերյանները և այլք կարելի է ասել հաստատ թե բավականացնում են համարյա ամբողջ Հյուսիսային Կովկասին, վերջապես Արմավիրը այնպես հռչակվել է մանուֆակտուրնի ապրանքով, որ ռուսները այժմ նրան կոչում են «маленькая Москва»[13]։ Քիչ առաջ անցնելով նշենք, որ արդեն XIX դարի 90-ական թթ. միայն մանուֆակտուրային ապրանքների տարեկան դրամական շրջանառությունը հասնում էր 10 միլիոնի, այն դեպքում, երբ արդուզարդի, երկաթեղենի, կոշկեղենի և նպարեղենի ապրանքների տարեկան շրջանառությունը միասին վերցրած նույնպես կազմում էր 10 միլիոն ռուբլի[14]։

Մանուֆակտուրային ապրանքների հիմնական գնորդները (չհաշված սպառումը ներքին շուկայում) հանդիսացել են Հյուսիսային Կովկասի վաճառականները։ Նրանք Մոսկվայում, Լոձում կամ այլ վայրերում անհրաժեշտ ապրանք ձեռք բերելու փոխարեն, ավելի ձեռնտու պայմաններով գրնել են Արմավիրում այն մեծահարուստ միջնորդ հայ առևտրականներից. որոնք իրենց ֆիրմաների բաժանմունքներն են ունեցել Մոսկվայում, Վորոնեժում, Տամբովում, Խարկովում և այլուր։

XIX դարի կեսերից Արմավիրում առևտուրը դուրս է գալիս բնատնտեսության նեղ շրջանակներից և ապրանքային բնույթ է ստանում։ Կապիտալիստական ապրանքա-դրամային հարաբերությունների ներթափանցման հետևանքով տոնավաճառային առևտուրը աստիճանաբար իր տեղը դիջում է մշտական առևտրին։ Երկրամասը ներդրավվում է համառուսական շուկայի մեջ, ձեռք բերելով ավելի առաջնակարգ նշանակություն՝ որպես հումքի աղբյուր և ապրանքիկ առևտրի կարևոր շրջան։

1875 թ. Ռոստով-Վլադիկավկաս երկաթուղու կառուցումը մեծ թափ հաղորդեց երկրամասի առևտրա-տնտեսական զարգացմանը։ Երկաթուղին, որն անցնում էր Արմավիրով, վերջինս կապում էր ոչ միայն Նովորոսիյսկի հարուստ շրջանի և սևծովյան նավահանգիստների, այլև Անդրկովկասի հետ։ Ելխավոր երկաթգծի վրա Արմավիրի հանգուցային դիրքը էապես կանխորոշում էր նրա առավելությունը հարևան մեծ քաղաքների՝ Կրասնոդարի, Ստավ-

11 Մաշտոցի անվ. Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 108, վավ. 402։
12 ЦГИА СССР, ф. 1276, оп. 2, д. 55, л. 21 об.
13 «Մեղու Հայաստանի», 1883, № 28, էջ 2—3։
14 «Նոր-Դար», 1891, № 163, էջ 2—3։

*րոպոլի, Մայկոպի նկատմամբ։ Կուբանի մարզի պետ, զեներալ-լեյտենանտ Լեոնովը 1885 թ. ապրիլի 5-ին Կովկասի գավառային պետին գրած զեկուցագրում հետևյալ կերպ է նկարագրում Արմավիրում առևտրի զարգացման գործում երկաթուղու նշանակությունը. «Արմավիրի միջով Ռոստով-Վլադիկավկազ երկաթուղու անցկացումից սկսած այն (Արմավիրը—Լ. Պ.) սկսել է արագ զարգանալ շնորհիվ եկվոր առևտրական դասի ներհոսքի։ Տարբեր տեսակի ապրանքների բարեհաջող արտահանման հետևանքով արդյունաբերությունը և առևտուրը նրանում զգալի առաջադիմել է, այնպես որ Արմավիրը իր առևտրական տեղադրությամբ այժմ ավելի քան կարևոր տեղ է գրավում Կուբանի մարզում և շատ հավանական է, որ ոչ հեռավոր ապագայում առևտուրն ու արդյունագործությունը նրանում էլ ավելի կծաղկեն ու կամրապնդվեն»*[15]։

*Արմավիրի ներքին և հատկապես արտաքին առևտրի աճը XIX դարի 70—80-ական թթ. կապված էր գյուղատնտեսական երկու կուլտուրաների՝ հացահատիկի և արևածաղկի յուղի արտադրության և արտահանման հետ։*

*Հացահատիկի զգալի մասը, որ ձեռք էր բերվում հարևան շրջաններից, նախքան արտահանվելը ներքին առևտրի առարկա էր դառնում։ XIX դարի վերջերին մարզում արդեն նկատվում էր հացահատիկային տնտեսության արագ զարգացում և հացառատ շրջանում կենտրոնական դիրք գրաված Արմավիրը դառնում է ապրանքային հացահատիկի կուտակման և փոխանակման կարևոր կենտրոն։ Պահպանված տեղեկությունների համաձայն դեպի Արմավիր հացահատիկային կուլտուրաների մշտական ներհոսք էր կատարվում երկրամասի 22 բնակավայրերից*[16]։ *Ստավրոպոլի պետական պալատի կառավարչի արտահայտությամբ, Ռոստով-Վլադիկավկազ երկաթուղուն հարող շրջանը և հատկապես Արմավիրը Հյուսիսային Կովկասում հացի առևտրի կենտրոնն էր և դրա շնորհիվ աչքի էր ընկնում իր զարգացած առևտրով*[17]։

*XIX դարի վերջին և XX դարի սկզբներին մարզի տնտեսական կյանքում մեծ դեր է սկսում խաղալ նաև արևածաղկի յուղի մշակությունը։ 1893 թ. հայազգի Յակով Պոպովը Արմավիրում հիմնում է առաջին յուղահան գործարանը, որտեղ օրական մշակվում էր 400 փութ արևածաղիկ, երբ մարզի մյուս գործարանները միասին վերցրած մշակում էին ընդամենը 100 փութ*[18]։ *Արդյունաբերական կապիտալը, այսպիսով, իր առաջին քայլերն էր կատարում Արմավիրում։ Յա. Պոպովից հետո յուղահան գործարաններ են հիմնում հայ առևտրա-արդյունաբերողներ Ավեդովը, Բաբաևը, Բարոնովը և ուրիշներ։ Եթե 1896 թ. Արմավիրում գործում էր 4 յուղահան գործարան, ապա 1902 թ.՝ 9*[19]։ *XX դարի սկզբներին Արմավիրը արևածաղկի յուղի արտադրության հիմնական կենտրոնն էր ամբողջ Հյուսիսային Կովկասում, նրա արտադրանքի մեծ մասը արտահանվում էր Ռուսաստանի շուկաները։*

*Հացահատիկի արտադրության հետ միաժամանակ Արմավիրում զարգանում է ալյուրի արտադրությունը։ 1900 թ. Արմավիրում գործում էր 4 այրա-*

---

[15] Центральный Государственный исторический архив Грузинской ССР (ЦГИА Груз. ССР), ф. 13, оп. 23, д. 1332, л. 2.

[16] *Նույն տեղում, թ. 4։*

[17] ЦГИА Груз. ССР, ф. 12, оп. 7, д. 99, л. 21 об.

[18] ГАКК, ф. 1547, оп. 1, д. 1, т. 1, л. 47 об.

[19] ЦГИА СССР, ф. 1276, оп. 2, д. 55, лл. 21 об.—22 об.

ղաց, մեկ շոգեաղաց և երեք ջրաղաց, որոնցից երեքը պատկանում էին հայ արդյունաբերողներին[20]։ Արմավիրում գործող բոլոր ալրաղացների տարեկան շրջանառությունը 1910 թ. անցնում էր 1 միլիոն ռուբլուց[21]։

Այսպիսով, XIX դարի վերջերին Արմավիրի առևտրա-արդյունաբերական հաստատությունների մեջ գերակշռությունը պատկանում էր հացահատիկի և արևածաղկի յուղի արտահանումով զբաղվող ձեռնարկություններին[22]։ Այդ ժամանակ Արմավիրը տարեկան արտահանում էր 3 278 104 փութ հացահատիկ, որը կազմում էր մարզի ամբողջ հացահատիկի 75 տոկոսը[23]։ 1908 թ. Արմավիրից արտահանվել է 1 500 000 փութ արևածաղկի յուղ և 3 500 000 փութ արևածաղկի քուսպ[24]։

Արմավիրի հայ առևտրականների գործունեության մեջ զգալի տեղ էր գրավում նաև բրդի, պոտաշի, անասունների, ինչպես նաև երկրագործական գործիքների, անտառանյութի, երկաթի և մանուֆակտուրային ապրանքների առևտուրը։

Առևտրի տարածմանը զուգընթաց ի հայտ են գալիս առաջին առևտրական ֆիրմաները։ XIX դարի 70-ական թթ. Արմավիրում բացվում են Տասպարյանների, Կուսիկյանների, Պոպովների, Սեֆերյանների, Արտեմովների, Խաչերեսյանների, Դավթյանների, Ղափլանյանների և ուրիշների առևտրական ֆիրմաները[25]։ Իրենց հարուստ վաճառատներով ու միլիոնների հասնող առևտրական գործարքներով դարի վերջին աչքի են ընկել հայ Տարասովները, Բագդասարովները, Ավեդովները, Հունանովները և ուրիշներ։

Ներքին և հատկապես արտաքին առևտրի կազմակերպման ու ծավալման գործում զգալի դեր էին կատարում Արմավիրի բաժնետիրական ընկերությունները, որոնք առևտրի և արդյունագործության որևէ ճյուղ իրենց ձեռքում կենտրոնացնելով, հանդես էին գալիս դրանց մենաշնորհ տնօրինությամբ։ XIX դարի վերջին և XX դարի սկզբներին Արմավիրում աչքի էին ընկնում հայ առևտրա-արդյունաբերողների հիմնադրած բաժնետիրական ընկերությունները։ Տարասով եղբայրները 1880 թ. Արմավիրում կազմակերպում են «Տարասով եղբայրների առևտրական տունը», իսկ 1899 թ., ունենալով 3 միլիոն ռուբլի հիմնական կապիտալ, նրանք հանդես են գալիս «Տարասով եղբայրների մանուֆակտուրային ընկերություն» հիմնելու նախագծով[26]։ Կանոնադրության նախագծում նշվում էր, որ ընկերությունը հիմնվում է Արմավիրում, Եկատերինոդարում, Սիմֆերոպոլում, Աստրախանում, Ստավրոպոլում և կայսրության այլ շրջաններում մանուֆակտուրային և այլ ապրանքների առևտուրը շարունակելու և զարգացնելու նպատակով[27]։

1905 թ. Ստեփան և Իվան Ավեդովները կազմակերպում են «Ավեդովների յուղահան գործարանների ընկերությունը»՝ 1 200 000 ռ. հիմնական կապիտալով։ Կանոնադրությունում նշվում էր, որ ընկերությունը հիմնվում է Կուբանի մարզի Եկատերինոդարի և Արմավիրի յուղահան գործարանների ար-

---

20 Մաշտոցի անվ. Մատենադարան. կաթ. դիվան, թղթ. 237, վավ. 297։
21 ЦГИА СССР, ф. 1276, оп. 19, д. 227, л. 87.
22 Նույն տեղում, оп. 2, д. 109, лл. 63—65.
23 «Кубанский сборник», т. 5, 1899, Екатеринодар, էջ 8։
24 ЦГИА СССР, ф. 1276, оп. 2, д. 109, лл. 63—65.
25 ԳԱԹ, Երվ. Շահազիզի ֆոնդ, էջ 160։
26 ЦГИА СССР, ф. 1263, оп. 2, д. 5388, лл. 291 об —293.
27 Նույն տեղում, д. 5393, л. 140.

տարրանքի վաճառահանման նպատակով[28]։ Նույն նպատակով, Հունանովների նախաձեռնությամբ, 1915 թ. հիմնվում է «Կովկասյան յուղահան գործարանների «Բրունա» բաժնետիրական ընկերությունը»[29]։

Վերոհիշյալ ընկերությունները իրենց ձեռքում էին կենտրոնացնում ոչ միայն առևտուրը, այլև արտադրությունը։ Հայ առևտրա-արդյունաբերողներին պատկանող «Ախթամար» ընկերությունը իրականացնում էր և՛ օճառի արտադրությունը, և՛ նրա վաճառքը[30]։ Փաստորեն, առևտրի և արդյունաբերության զարգացմանը զուգընթաց, XIX դարի 80-ական թթ. սկսած Արմավիրում ձևավորվում է հայ առևտրա-արդյունաբերողների խավը։ Մեծահարուստ հայ առևտրականների մի մասը, գիտակցելով արդյունաբերության զարգացման հնարավորությունները ու շահավետությունը, իրենց կապիտալները ներդնում են արդյունաբերության ոլորտը։

Արմավիրահայ համայնքի ծնունդ հանդիսացող և տվյալ միջավայրում զարգացող հայ առևտրա-արդյունաբերողների խավը զգալի դրամական ներդրումներ է կատարել քաղաքի բարեկարգման, տների, խանութների և առևտրա-արդյունաբերական հաստատությունների կառուցման համար[31]։ Նշանակալի գումարներ են տրամադրվել արմավիրահայ համայնքին[32], Հ. Բ. Ը. Մ. Արմավիրի մասնաճյուղին, զարասկզբի ազգամիջյան կռիվներից տուժած կովկասահայությանը և այլն[33]։ 1911 թ. արմավիրցի Մորոսյան (Տարասով) եղբայրները զգալի գումար են նվիրաբերել էջմիածնի Գևորգյան ճեմարանի ծախսերը հոգալու համար և այլն[34]։

Մինչև XIX դարի 70—80-ական թթ. Արմավիրում ռուս առևտրա-արդյունաբերողների թիվը փոքր էր, իսկ գործունեության շրջանակները՝ սահմանափակ։

Վարավերջին և հատկապես երկաթուղու կառուցումից հետո Արմավիրը դեպի իրեն է գրավում բազմաթիվ ռուս առևտրականների ու արդյունաբերողների, որոնք տեսնելով քաղաքի զարգացման հեռանկարները, այնտեղ են փոխադրում իրենց կապիտալները։ XX դարի 10-ական թթ. ռուսական կապիտալը արդեն և՛ շրջանառությամբ, և՛ եկամուտներով բազմիցս գերազանցում էր հայ առևտրա-արդյունաբերողների կապիտալին։ 1911 թ. Արմավիրի ռուս բնակչությանը պատկանող առևտրական ձեռնարկությունների թիվը հասնում էր 630-ի, իսկ հայերինը՝ 123-ի։ Առաջինների դրամական շրջանառությունը կազմում էր 24 750 939 ռ.՝ 1 099 641 ռ. շահույթով, իսկ հայ առևտրականներինը՝ ընդամենը 6 387 037 ռ.՝ 230 633 ռ. շահույթով[35]։ Փաստորեն, տնտեսական կյանքի առաջընթացը հանգեցնում էր այն բանին, որ ինքնուրույն հանդես եկող հայ առևտրական կապիտալը աստիճանաբար տարրալուծվում էր համառուսական առևտրական կապիտալի մեջ, դառնալով նրա մի մասնիկը։

Արմավիրի առևտրականների կորիզը կազմում էին ներքին առևտրով զբաղվող վաճառականները։ 1909 թ. Արմավիրում հաշվվում էր 557 առև-

28 Նույն տեղում, д. 5769, лл. 611—613.
29 Նույն տեղում, ф. 23, оп. 13, д. 323, л. 1.
30 ГАКК, ф. 460, оп. 2, д. 36, лл. 1—14.
31 ЦГИА СССР, ф. 1276, оп. 2, д. 55, л. 22 об.
32 ՀԿՊՊԱ, ֆ. 52, ց. 5, գ. 313, թ. 1։
33 «Արարատ», 1906, հատ. Դ, էջ 279։
34 «Նոր-Դար», 1902, № 58, էջ 3։ Տե՛ս նաև՝ «Արարատ», 1911, էջ 352։
35 ГАКК, ф. 318, оп. 2, д. 4067, л. 236.

տրական։ Դրանցից 252-ը հայեր էին[36], որոնցից 99-ը՝ Ռուսաստանի, Անդրկովկասի և այլ շրջանների նախկին բնակիչներ, որ մշտական բնակություն էին հաստատել Արմավիրում։ Փաստաթղթերում հիշատակվում են նաև պարսկահպատակ հայ առևտրականներ, որոնք կասպիական առևտրի անկումից հետո Հյուսիսային Կովկասի վրայով առևտուր էին անում Ռուսաստանի կենտրոնական նահանգների և ասիական երկրների միջև։

Լաբինսկի գավառի ատաման, գնդապետ Սավիցկին իր զեկուցագրերից մեկում Արմավիրի առևտրի ու առևտրականների մասին գրում է. «Շրջեցի ամբողջ Լաբինսկի գավառը և տեղեկություններ հավաքեցի Արմավիրի առևտրի ազդեցության ոլորտի մասին, որ նա տարածել է իր շրջակայքում և այդ բոլորը անհավատալի ընդարձակ թվաց ինձ։ Անթիվ առևտրականների հետ միասին, որոնք ապրանք են ձեռք բերում հիշյալ գյուղի մեծաքանակ պահեստներից, տեղի ամբողջ առևտրական դասը առևտուր է անում Լաբինսկի, Մայկոպի, Կովկասյան և Բատալպաշինսկի գավառներում, իսկ «կարմիր ապրանքները» Արմավիրից գնում են Եկատերինոդար, Ստավրոպոլ, Կավկազկայա ստանիցան[37] և Դոնի զինվորական մարզը։ Այնպես որ, վերոհիշյալ ապրանքների առևտրով նույնիսկ Դոնի-Ռոստովը չի կարող մրցել Արմավիրի հետ»[38]։

XX դարի սկզբներին Արմավիրը Հյուսիսային Կովկասի զարգացած առևտրական կենտրոններից մեկն էր և իր առևտրական շրջանառությամբ բնավ չէր զիջում Ստավրոպոլին, Եկատերինոդարին, Վլադիկավկազին։ Մեծ էր Արմավիրի բաժինը հատկապես արտաքին առևտրում։ 1899 թ. տվյալներով, հացի առևտուրը իրենց ձեռքում կենտրոնացրած Արմավիրի 12 ձեռնարկությունների դրամական շրջանառությունը կազմում էր 2 707 389 ռուբլի՝ 86 359 ռ. եկամտով[39]։ Հացահատիկային կուլտուրաների և արևածաղկի յուղի օրական առևտուրը Արմավիրում նույնպես հսկայական չափերի էր հասնում. Արմավիրի բորսային կոմիտեի տվյալներով վերոհիշյալ կուլտուրաների օրական առևտուրը 1910 թ. կազմում էր 50 000 ռ.[40]։

Ընդհանուր արտադրանքի առաքումով, XIX դարի վերջերին Արմավիրը մարզում 3-րդ տեղն էր գրավում՝ Եկատերինոդարից և Կավկազկայա ստանիցայից հետո։ Այսպես, եթե առաքման նպատակով 1895 թ. Արմավիրի կայարանն էր ընդունվում 5 507 176 փութ ապրանք, ապա Եկատերինոդարում՝ 7 625 700 փութ, Կավկազկայա ստանիցայում՝ 6 380 734 փութ։ Ինչ վերաբերում է ներմուծմանը, ապա այս տեսակետից Արմավիրը զիջում էր միայն Եկատերինոդարին և Նովորոսիյսկին. Արմավիր ներմուծվում էր 3 041 588 փութ ապրանք, Եկատերինոդար՝ 4 794 113 փութ, իսկ Նովորոսիյսկ՝ 3 057 044 փութ։ Արմավիր ներմուծվող մանուֆակտուրային և արդուզարդի ապրանքները կազմում էին 2 332 963 փութ (Եկատերինոդարում՝ 2 918 112 փութ), երկրագործական մեքենաները և գործիքները՝ 88 260 փութ (Եկատերինոդարում՝ 34 322 փութ)[41]։ Արագ տեմպերով աճում էր արտաքին առևտուրը։

---

36 ГАКК, ф. 449, оп. 2, д. 1826, лл. 33—106.

37 Ներկայիս՝ Կրոպոտկին քաղաքը։

38 ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 23, д. 133, л. 29.

39 ЦГИА СССР, ф. 1090, оп. 1, д. 133, л. 29.

40 Նույն տեղում, ф. 1276, оп. 9, д. 227, л. 87.

41 ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 23, д. 1332, л. 5.

1908 թ. Արմավիրից արտահանվել է 12,5 միլիոն փութ ընդհանուր արտադրանք, իսկ 4 տարի անց՝ 16 միլիոն փութ[42]։

1913 թ. տվյալներով Արմավիրի ապրանքաշրջանառությունը (արտահանումը և ներմուծումը) կազմում էր մարզի ընդհանուր ապրանքաշրջանառության 38 տոկոսը, ընդ որում, արտահանումը կազմում էր մարզի ընդհանուր արտահանման 38 տոկոսը, իսկ ներմուծումը՝ ընդհանուր ներմուծման 47 տոկոսը[43]։

Արմավիրի առևտրա-արդյունաբերական նշանակալի զարգացման մասին է վկայում XX դարի սկզբներին քաղաքում վարկային հաստատությունների, բաժնետիրական ընկերությունների, առևտրական բանկերի և այլ հիմնարկությունների հաստատումը։ 1910 թ. իր գործունեությունն է սկսում Արմավիրի ապրանքային բորսան, որի կոմիտեի նախագահ է ընտրվում Սերգեյ Մխիթարովը[44]։ Մեկը մյուսի ետևից բացվում են Պետերբուրգի խոշոր բաժնետիրական բանկերի բաժանմունքները։

1913 թ. տվյալներով, Արմավիրում գործում էր 38 առևտրական ընկերություն, 25 առևտրական տուն, պետական բանկի մեկ բաժանմունք, 12 վարկային հաստատություն, որից 4-ը՝ փոխադարձ վարկի ընկերություն[45]։

Այսպիսով, եթե մինչև XIX դարի 80-ական թթ. Արմավիրի հայկական գաղթավայրի տնտեսական կյանքում տոն տվողը եղել է առևտուրը, ապա դրանից հետո և հատկապես դարավերջին Արմավիրը դառնում է ոչ միայն առևտրի, այլև մշակող արդյունաբերության կարևոր կենտրոններից մեկը Հյուսիսային Կովկասում։

## ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКАЯ ЖИЗНЬ АРМЯНСКОГО ПОСЕЛЕНИЯ В АРМАВИРЕ (1839—1914 гг.)

Л. А. ПОГОСЯН

(Резюме)

Удобное географическое положение и почти полное отсутствие крепостничества в Армавире и в области, некоторые экономические привилегии, данные коренному армянскому населению, способствовали торгово-промышленному развитию города. Благоприятные экономические условия позволили сосредоточить в Армавире почти всю торговлю края. В Армавире сформировалась армянская торгово-промышленная буржуазия. В конце XIX в. одно за другим открываются акционерные общества Тарасовых, Аведовых, Упановых, которые берут в свои руки не только производство, но и торговлю мануфактурными товарами, подсолнечным маслом и т. п. Армавир отличался развитой внутренней и внешней торговлей и считался вторым городом на Северном Кавказе после Екатеринодара (теперь Краснодар).

---

42 Մաշտոցի անվ. Մատենադարան, կաթ. դիվան, թղթ. 238, վավ. 88։ Տե՛ս նաև՝ ЦГИА СССР, ф 1276, оп. 2, д. 109, лл. 63—65.

43 «Доклад биржевого Комитета о деятельности Армавирской Товарной Биржи в 1923—1924 гг.», Армавир, 1926, էջ 33։

44 ЦГИА СССР, ф. 1276, оп. 2, д. 109, лл. 63—65.

45 ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 2, д. 470, л. 191 об.